

մը, որ վայել ըլլայ իմ աստծու բնակութեանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքին ո՛չ մէկ բառը կեղծ չի հնչէ, ո՛չ մէկ բառի արձագանգը դատարկ չի հնչէ»:

Ի՞նչ կը նշանակեն այս խօսքերը. անոնք յարակցութիւն ունի՞ն սովորական կրօնի մը խնդիրներուն հետ եւ ի՞նչ է այդ անդուլ, անկաշկանդ ներքին որոնումը ճշմարտութեան. կրօնի արդէն իսկ յայտնագործած եւ անմերժելի ճշմարտութեանց մէջ խոյ՞գ մը: Ո՛չ. կը տեսնուի թէ վանական եւ կրօնական կեանքէն դուրս խնդիր մը կը յուզուի: Վանահօր կործանել ուզած եկեղեցին՝ պարտուած ճշմարտութեան մը ուրուանկարն է: Դարերու ընթացքին՝ անկաշկանդ գիտական միտքը ի խոյ՞գ կ'ելլէ ճշմարտութեանց՝ կը կարծէ երբեմն գտած ըլլալ զանոնք, բայց իր երջանկութիւնը կարճատեւ կ'ըլլայ, որովհետեւ կը զգացուի շուտով՝ անոնց զաղփաղփումն էութիւնը: Ու ահա նորէն նոյն աշխատութիւնը, նոյն տքնութիւնը գերագոյն ճշմարտութեանց՝ ատով՝ ամէն մտքի մարդ, իր եկեղեցիները կը քայքայէ եւ կը շինէ. այսպէս կ'ընթանայ կեանքը յարատեւ:

Վանահայրը քայքայեց իր եկեղեցին, որովհետեւ ան իր անպարտելիօրէն իտէալիսթ, տեսլական հոգւոյն գոհացում չէր կրնար տալ, ունենալով իր մէջ *զգացման* հօգոր երակ մը, իշխանուհոյն սիրոյ բաժինը... Կործանելով այնքան ջանքով շինած եկեղեցին: Վանահայրը պարտուած մը չէ...

Իսկ Արեղան – անիկա մարդկային մեծագոյն զանգուածները վարող բնագոյներուն, զգացմանց խորհրդանշանն է: Արդարեւ մեր մէջ տակաւին կը տիրապետէ *logique affective*-ը (բնագոյային տրամաբանութիւն) ինչպէս պիտի ըսէր Կիւսթավ Լը Պօն, մինչ *logique rationnelle*-ը (բանականութիւնը) տկար է մեծապէս: Աւելի զգացումներով կ'ապրինք, կը գործենք, կ'ուղղենք մեր համակրանաց, հրճուանքի եւ տխրական վիճակներու քայլերը, քան վերլուծական մտածմամբ: Շա՛տ անգամ երբ մտածումը կը թելադրէ մեզի ուղիղ ճամբան, բանական ուղին, ու մենք կը յուսանք, կ'որոշենք հետեւել իրեն, յանկարծ բռնոն